Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.20/[462879]-18

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄՈՏ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Մ. Գրիգորյան	ՀՀ փոխվարչապետ
Ա. Ղարիբյան	ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական
Վ. Կարապետյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Ա. Մանուկյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Վ. Հովհաննիսյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Ա. Մինասյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Ս. Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար
Ա. Ձանջուղազյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Շաբոյան	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ
Ա. Բաբայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Ա. Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Ծ. Սողոմոնյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Լ. Մնացականյան	«Հայաստանի ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ տնօրեն
Կ. Գևորգյան	«Հայաստանի ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ տնօրենի տեղակալ
Ա. Ավակ Ավակյան	Բիզնես Արմենիա կառույցի տնօրեն

Ա. Գրիգորյան	Բիզնես Արմենիա կառույցի ներկայացուցիչ
Ա. Բաղալյան	Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա ՈՒՎԿ-ի տնօրեն
Ա. Շահնազարյան	Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության գործադիր տնօրեն
Կ. Գևորգյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ՓՄՁ-ի զարգացման վարչության պետ
Ա. Ալեքսանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
Գ. Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Փ. Թաղևոսյան	«Հարկ Վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Դ. Աղաջանյան	Գործարարության աջակցման գրասենյակի տնտեսագետ-խորհրդատու
Հ. Ավագյան	«ՓՄՁ-ի համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի տնօրեն
Վ. Համբարձումյան	«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» նախագահ
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ
Մ. Կարապետյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ա. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

1. ՓՄՁ-ի ոլորտում առկա հարկային խնդիրներ և օրենսդրական այլ հարցեր

(Ալբերտ Բաբայան, Նիկոլ Փաշինյան)

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ալբերտ Բաբայանի կողմից ներկայացված ՓՄՁ-ի ոլորտում առկա հարկային խնդիրները ու օրենսդրական այլ հարցերը և դրանք քննարկել Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանի կողմից ձևավորվող աշխատանքային խմբում:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող պետական աջակցության կառույցների գործառույթ-ների քննարկում

(Ալբերտ Բաբայան, Նիկոլ Փաշինյան)

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ալբերտ Բաբայանի կողմից ներկայացված ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող պետական աջակցության կառույցների գործառույթները և դրանք քննարկել Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանի կողմից ձևավորվող աշխատանքային խմբում:

3. ՓՄՁ-ի աջակցության գործիքակազմի քննարկում

(Ալբերտ Բաբայան, Նիկոլ Փաշինյան)

1. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանին՝

ա. ձևավորել աշխատանքային խումբ ՓՄՁ-ի ոլորտի խնդիրները քննարկելու նպատակով,

բ. ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինայանին ներկայացնել առաջարկություն ՓՄՁ-ի խորհրդի կազմի ձևավորման վերաբերյալ.

2) խորհրդակցության ընթացքում ՓՄՁ-ի ոլորտի վերաբերյալ հնչեցված խնդիրները քննարկել իր իսկ կողմից ձևավորվող աշխատանքային խմբում, իսկ խնդրահարույց հարցերը ներկայացնել քննարկման ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինայանի կողմից ձևավորվող ՓՄՁ-ի խորհրդի նիստում.

3) ընդունել ի գիտություն, որ ՓՄՁ-ի ոլորտի բարելավմանն ուղղված լուծումները վերջիններիս ձեռքին չպետք է դառնան գործիք ստվերի ավելացման տեսանկյունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ